ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՍԱՄ-ՍՈՒՐ ՍՊԸ-ն ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ25/12 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
39	ԳՕՍՏ 17151-81 և ԳՕՍՏ 27002-2020 -ի չափորոշիչներին համապատասխան: Սեղանի կմախքը և ոտքերը ամբողջությամբ պետք է լինեն մետաղական քառանկյուն խողովակներից (30 x 30 x 2.0 մմ), անկյունների միացումը զոդման եղանակով 45 աստիճան հատվածքով, կմախքի արտաքին չափերը՝ 1200 x 600 x 830 մմ: Սեղանի կմախքին զոդման միջոցով ամրացվում են մետաղական ոտքերը, որոնց եզրերը պետք է խցանված լինեն 8 մմ հաստությամբ պլաստիկե խցաններով: Սեղանը ունի երկաթյա երկու շարահարթակ՝ առաջինը գետնից 200 մմ բարձրության վրա, իսկ երկրորդը 500 մմ: Սեղանը և շարահարթակները երեսպատված են 1.8 - 2.1 մմ հաստությամբ 18/10 AISI 304 մարկայի չժանգոտվող պողպատից սեղանածածկով, երեսի սեղանածածկի երեք կողմերը պետք է ծալված լինեն դեպի ներքև 30 մմ, իսկ հետևի կողմը կլորացված եզրով՝ դեպի վերև 70 մմ: Շարահարթակները ամրանում են(նստում են) շրջանաձև միացված մետաղական քառանկյուն խողովակներին (30 x 30 x 2.0 մմ), անկյունների միացումը զոդման եղանակով 45 աստիճան հատվածքով: Զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ: Սեղանի կմախքը և ոտքերը ամբողջությամբ պետք է լինի փոշեներկված արծաթափայլ գույնի ջրակայուն ներկով: Սեղանի երկու կողմերում պետք է լինեն երկուական մետաղական կախիչներ: Տեղափոխումը և տեղադրումը մատակարարի հաշվին մատակարարի միջոցներով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО САМ-СУР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԿՄՆՀՀ ԷԱՃԱՊՁԲ25/12 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
39	